# ԼՈՂԱՑՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Լողացող տոկոսադրույքը հաշվարկվում է հիմք ընդունելով Հաշվարկային ցուցանիշը՝ Հիմնական կամ Երկրորդային, գումարած հաստատուն տոկոսային մարժա՝ ՀՀ դրամով վարկերի համար 5.5%՝ Հիմնական ցուցանիշի կիրառման դեպքում և 8.25% Երկրորդային ցուցանիշի կիրառման դեպքում, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 5.5% հաստատուն տոկոսային մարժա՝ Հիմնական ցուցանիշի և 8.75% հաստատուն տոկոսային մարժա՝ Երկրորդային ցուցանիշի կիրառման դեպքում և Եվրոյով վարկերի համար՝ 8.75% հաստատուն տոկոսային մարժա՝ Հիմնական և Երկրորդային ցուցանիշների կիրառման դեպքում

Լողացող տոկոսադրույքը առաջին հերթին սահմանվում է հիմք ընդունելով Հիմնական ցուցանիշը: Հիմնական ցուցանիշի հասանելիության անհնարինության դեպքում կօգտագործվի Երկրորդային ցուցանիշը:

Եթե Հիմնական և Երկրորդային ցուցանիշները դառնում են անհասանելի, ապա Լողացող տոկոսադրույքը հաջորդող ժամանակահատվածի համար սահմանվում է հիմք ընդունելով Կողմերի միջև համաձայնեցված համանման այլ ցուցանիշ: Ընդ որում՝ համանման այլ ցուցանիշի վերաբերյալ Կողմերի միջև համաձայնության չգալու դեպքում սույն Պայմանների գործողության հաջորդ ժամանակահատվածի համար կգործի մինչև կիրառվող վերջին ցուցանիշի անհասանելի դառնալու պահը սահմանված տոկոսադրույքը:

**Բանկի Հաշվարկային ցուցանիշը** լողացող է, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով:

Բանկի կողմից որպես Հաշվարկային ցուցանիշ սահմանվում են հետևյալ ցուցանիշները՝

<u>ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ</u>

1. **Հիմնական ցուցանիշ**՝ ՀՀ առևտրային բանկերի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված մեկ տարուց ավելի ժամկետայնության ԱՄՆ դոլարով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx ինտերնետային կայքում, կամ

2. **Երկրորդային ցուցանիշ**՝ ապահովված օվերնայթ ֆինանսավորման տոկոսադրույք (SOFR) միջինացված 180 օրվա համար: Տոկոսադրույքը սահմանվում է Նյու Յորքի դաշնային պահուստային բանկի կողմից և հրապարակվում է https://apps.newyorkfed.org/markets/AutoRates/sofr-avg-ind ինտերնետային կայքում:

<u>ՀՀ ԴՐԱՄՈՎ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ</u>

1. **Հիմնական ցուցանիշ**՝ ՀՀ առևտրային բանկերի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված մեկ տարուց ավելի ժամկետայնության ՀՀ դրամով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx ինտերնետային կայքում, կամ

2. **Երկրորդային ցուցանիշ**՝ ՀՀ պետական 365–օրյա զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am ինտերնետային կայքում:

**ԵՎՐՈՅՈՎ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝**

1. **Հիմնական ցուցանիշ՝** Եվրոյի կարճաժամկետ տոկոսադրույք (€STR), որը հրապարակվում է Եվրոպական Կենտրոնական Բանկի կողմից https://www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_short-term_rate/html/index.en.html ինտերնետային կայքում, կամ

2. **Երկրորդային ցուցանիշ՝** 12-ամսվա համար առաջարկվող ԵՎՐՈԻԲՈՐ (EURIBOR), որը հրապարակվում է Եվրոպական դրամական շուկաների ինստիտուտի (European Money Markets Institute (EMMI)) կողմից https://www.emmi-benchmarks.eu/euribor-org/euribor-rates.html ինտերնետային կայքում:

Գործող հաշվարկային ցուցանիշի մասին տեղեկությունները մշտապես հասանելի են նաև Բանկի տնային ինտերնետային էջում (http://www.byblosbankarmenia.am), ինչպես նաև Բանկի մասնաճյուղերում: